Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏԳԱՄԸ ՄԵՐ ՏԷՐ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՍՈՒՐԲ ԾՆՆԴԵԱՆ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ ՏՕՆԻ ԱՌԻԹՈՎ

(6 Յունուարի, 2019 թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

Փառք հրաշափառ Ծննդեան եւ Յայտնութեան Քո, Տէր:

Սիրելի բարեպաշտ ժողովուրդ,

Այսօր ունկնդիր ենք Քրիստոսի Սուրբ Ծննդեան աւետիսին եւ խնդութեամբ օրհնաբանում ենք Աստծուն փրկութեան Իր շնորհի համար։ Նրան ենք փառաբանում, ասում է առաքեալը, «ով կարող է մեզ պահել անբիծ ու անարատ եւ կանգնեցնել Իր փառքի առաջ անխառն ցնծութեամբ» (Յուդա 24)։

Մսուրում ծնուած եւ աշխարհ եկած Մանկան մասին հրեշտակն աւետում է. «Այսօր Դաւթի քաղաքում ձեզ համար ծնուեց մի Փրկիչ, որ Օծեալ Տէրն է» (Ղուկ. Բ 11)։ Քրիստոս ծնուեց Աստուծոյ երկիւղով լեցուն, երկնային առաքինութիւններով զարդարուած Սուրբ Կոյսից։ Աստուծոյ Որդին հասակ առաւ բարեպաշտ ընտանեկան յարկում Սուրբ Տիրամօր եւ Սուրբ Յովսէփի, ովքեր ամեն նեղութեան ու հալածանքի համբերեցին, հոգ տարան Մանուկ Յիսուսին՝ իրենց հաւատաւոր կեանքով դառնալով Նրա աստուածային առաքելութեան մասնակիցը։

Սուրբ Ծննդեան հրաշագարդ պատկերի մէջ, սիրելիներ, տեսնում ենք, որ փրկութեան ուղին սկիզբ առաւ ընտանիքից։ Ընտանիքից ծագեց մարդկանց երկնային արքայութեան ժառանգորդը դարձնելու լուսեղէն ճանապարհը։ Քրիստոսով, արդարեւ, մենք որդեգիրներն ենք Աստուծոյ։ Քրիստոսով մեզ Հայր է Արարիչն Աստուած, Ով սիրում է մեզ եւ նորոգում է մեր կեանքը Սուրբ Ծննդեան յուսառատ ու օրհնաբեր ուրախութեամբ։ Փրկչի Ծննդեան աւետիսը ոռոգում է մեր հոգիները, լիացնում մեր հոգեւոր ապրումներն ու զգացումները, պարգեւում է ուժ ու զօրութիւն աստուածային կամքի մէջ մնալու, մեր կեանքում ու գործերում զօրացնելու խաղաղութեան, արդարութեան, սիրոյ, համերաշխութեան ուղիները եւ մշտահունչ պահելու առ Աստուած փառաբանութիւնը. «Փառք հրաշափառ Ծննդեան եւ Յայտնութեան Քո, Տէր»։

Սուրբ Ծննդեան հոգեպարար զգացումների մէջ, սիրելի բարեպաշտ ժողովուրդ, մեր աղօթական մտքերն ուղղուած են նաեւ աշխարհի մեծ ընտանիքի հաւատակից մեր այն քոյրերն ու եղբայրները, ովքեր նուիրական այս տօնը դիմաւորում են վշտի ու նեղութիւնների մէջ։ Մեր մտածումներն ուղղուած են այնտեղ, որտեղ մարդկութեան կեանքը տեւականօրէն ալեկոծում են անարդարութիւնը, գերիշխելու անյագուրդ տենչը, ագահութիւնը, որտեղ մարդիկ շարունակում են կրել աղքատութեան, իրաւունքների ոտնահարման, պատերազմների առաջ բերած աւերներն ու ցաւերը, որտեղ բռնութիւնը բռնութիւն է ծնում, ատելութիւնը՝ ատելութիւն, խաբեութիւնն ու սուտը բազմապատկուում են նոր կեղծիքներով։ Այս չարիքները, լինեն դրանք միջանձնային յարաբերութիւններում, ընտանիքներում, թէ ազգերի ու պետութիւնների միջեւ, տանում են դէպի փակուղիներ ու ճգնաժամեր, որոնց յաղթահարման համար շարունակ մեծ ջանք ու ճիգեր են պահանջուում։ Փակուղիների են տանում նաեւ կեղծ ազատականութեան աստուածամարտ ընթացքները՝ հեռացնելով տէրունապատուէր կեանքից, հոգեւորից, խաթարելով հիմերը առողջ հասարակութեան եւ ամուր ընտանիքի։ Քրիստոսի պարգեւած փրկութեան աստուածպատուէր ուղիներով է, որ մարդկութիւնը պիտի կարողանայ Երկիր մոլորակի վրայ լինել ու մնալ որպէս մեծ ընտանիք՝ փոխադարձ սիրով ու օգնութեամբ ամոքելով իր վէրքերը, հոգալով կարիքները, կարգաւորելով այս աշխարհի խնդիրները եւ ծառայելով «յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն» հրեշտակաձայն պատգամին, որը հնչեց շնորհաբեր ժամին Քրիստոսի Սուրբ Ծննդեան։

Մեր պատմութեան օրհնեալ ժամանակաշրջանում մեր ժողովուրդը Քրիստոսով դարձել է հաւատաւոր մէկ ընտանիք՝ լուսաւորուելով Տիրոջ կենարար շնորհներով։ Առ Տէրը հաւատարիմ ընթացքը բարեպաշտ մեր նախնեաց, մենք, որպէս նրանց հարազատ զաւակները, պիտի շարունակենք պահպանել անսասան հաւատով եւ ապրել ու գործել առաջընթացի վճռականութեամբ։ Այսօր մեր կեանքի նոր փոփոխութիւններում թեւածում են յոյսն ու լաւատեսութիւնը՝ նորանոր ձեռքբերումներ արձանագրելու, յաջողութիւններ ու յաղթանակներ կերտելու։ Միմեանց ապաւինելով ու սատարելով ի զօրու ենք շէնացնել մեր կեանքը հայրենիքում ու սփիւռքում, պաշտպանել մեր սահմանները, ազգային արդար իրաւունքները, հզօրացնել Հայաստան ու Արցախ հայրենի մեր երկիրը։ Հայրենիքի արժանաւոր զաւակ դաստիարակելու, պետութեան քաղաքացի

կրթելու առաջին հանգրուանը ընտանիքն է։ Ընտանիքում է կերտուում ազգի ապագան, դրուում հիմերը հզօր պետութեան։ Ընտանիքի գորովաշատ միջավայրում են մանուկ հոգիներում պտղաբերում Աստուծոյ խօսքի սերմանուած հունդերը, սնուցուում հոգեւոր-բարոյական արժէքները, բարին ընտրելու աներկիւղ ոգին։ Ընտանիքում մատուցուած օրինակով կրթուում են միմեանց հանդէպ սէրը, վստահութիւնը եւ հոգատարութիւնը։ Արդ, նախանձախնդիր մնանք նուիրականութեանն ու ամրութեանը ընտանիքի։ Անխաթար պահպանենք աստուածահաստատ ընտանիք հասկացութիւնը, նրա սրբութիւնը, ազգային աւանդոյթները, խնամենք ու բարձրացնենք մեր հոգեւոր ու ազգային կեանքը եւ մնանք մշտապէս Տիրոջ որդեգրութեան շնորհի մէջ՝ որպէս հաւատաւոր մէկ ընտանիք, որպէս Աստուծոյ սեփական ժողովուրդ։

Աստուածօրհնեալ ընտանիքի արժէքը եւ հիմնարար առաքելութիւնը կարեւորելով ազգային, պետական ու հասարակական մեր կեանքում՝ 2019 թուականը հռչակում ենք ընտանիքի տարի։ Յորդորում ենք եկեղեցական եւ թեմական մեր կառոյցներին եւ հոգեւոր սպասաւորներին նախաձեռնել ընտանիքներին ուղղուած աջակցութեան ծրագրեր ու միջոցառումներ, կազմակերպել ուխտագնացութիւններ մայր հայրենիք, Սուրբ Էջմիածին, Տէրունական եւ հայրենական սրբավայրեր՝ զօրանալու հաւատքով, տոգորուելու հայրենեաց սիրոյ ջերմութեամբ եւ ազգի ու հայրենիքի զաւակը լինելու նուիրական գիտակցութեամբ։

Սուրբ Ծննդեան բերկրալի աւետիսով եղբայրական Մեր ողջոյնն ենք յղում Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու Նուիրապետական Աթոռների Գահակալներին՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա. Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսին, Երուսաղէմի Հայոց Պատրիարք Ամենապատիւ Տ. Նուրհան արքեպիսկոպոս Մանուկեանին։ Աղօթում ենք հիւանդութեան մահճում գտնուող Ամենապատիւ Տ. Մեսրոպ Արքեպիսկոպոս Մութաֆեան Պատրիարքի համար։ Փրկչի շնորհների հայցով Մեր ողջոյնն ենք յղում քոյր Եկեղեցիների հոգեւոր Պետերին։ Հայրապետական օրհնութեամբ ողջունում եւ Մեր բարեմաղթանքներն ենք բերում Սրբազան Պատարագի արարողութեանը ներկայ Հայաստանի Հանրապետութեան Նախագահ տիար Արմէն Սարգսեանին եւ Վարչապետի պաշտօնակատար տիար Նիկոլ Փաշինեանին։ Ողջոյն ենք յղում Արցախի Հանրապետութեան Նախագահ տիար Բակօ Սահակեանին, հայոց պետական աւագանուն, Հայաստանում հաւատարմագրուած դիւանագիտական առաքելութիւնների ներկայացուցիչներին։ Հայրապետական Մեր սէրը, օրհնութիւնն ու

բարեմաղթանքները՝ մեր Սուրբ Եկեղեցու հոգեւոր դասին եւ համայն հաւատաւոր Մեր ժողովրդին։

Սուրբ Ծննդեան հոգենորոգ այս օրը աղօթում եւ հայցում ենք, որ աշխարհում բազմապատկուեն երկնային շնորհները, մարդիկ առատութեամբ պտղաբերեն բարի գործեր, սէր, արդարութիւն, խաղաղութիւն, գութ ու ողորմածութիւն, որոնք դիմադարձում են չարիքներին եւ ճանապարհ հարթում դէպի լուսաւոր գալիքը մարդկութեան։ Աղօթքով առ Աստուած հայցում ենք, որ Իր ամենախնամ հոգածութեան եւ սիրոյ մէջ պահի մեր ժողովրդին եւ պարգեւի ուժ ու զօրութիւն՝ կերտելու նոր օրը իր կեանքի եւ մնալու օրհնեալ, նուիրեալ ընտանիքը Քրիստոսի՝ հաւատարիմ սրտով միշտ փառաբանելու. «Փառք հրաշափառ Ծննդեան եւ Յայտնութեան Քո, Տէր»։

Գոհաբանական այս զգացումով աշխարհասփիւռ հաւատաւոր մեր ժողովրդին ցնծութեամբ աւետում ենք՝

Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ,
Ձեզ եւ մեզ մեծ աւետիս։